Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Մարզպետարանի գործունեության կազմակերպման ընդհանուր հարցեր

Մարզում կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացվել է պետական և համայնքային շահերի ներդաշնակման, հանրապետական գործադիր մարմինների և նրանց տարածքային ծառայությունների հետ համագործակցության և գործողությունների փոխհամաձայնեցման հիման վրա: 2017թ. ընթացքում մարզպետի կողմից հրավիրվել է մարզխորհրդի 4 նիստ և 6 խորհրդակցություն: Մարզխորհրդի նիստերում, խորհրդակցություններում քննարկվել են մարզի ընդհանուր սոցիալ-տնտեսական իրավիճակին առնչվող հարցեր: Մարզպետի կողմից ընդունվել և արձակվել են համապատասխանաբար 466 որոշումներ և 114 կարգադրություններ: Մուտքագրվել է ընդհանուր քանակով 18419 և առաքվել 5684փաստաթուղթ:
Մարզպետի մոտ յուրաքանչյուր ամսվա հինգշաբթի օրերին կազմակերպված ընդունելություններին ընդհանուր թվով մասնակցել են 269 քաղաքացիներ, որոնցից 64-ը իրենց հարցադրումներին ստացել են բանավոր սպառիչ պատասխաններ, ինչպես նաև լուծվել են նրանց կողմից բարձրացված բազում հարցեր: Մարզպետարան են ստացվել քաղաքացիների ընդհանուր թվով 2120 դիմումներ, 6 առաջարկություններ և 53 բողոքներ/ընդհանուր թվաքանակով 2179նամակներ/: Մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելության և դիմումների մասին տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

2017թ. ընթացքում մարզպետարանի հաստիքային միավորների թիվը կազմում է 129, որից 109-ը՝ քաղաքացիական ծառայության պաշտոններ են: Ըստ հաստատված պլան-գրաֆիկի 35 քաղաքացիական ծառայողներ վերապատրաստվել են քաղաքացիական ծառայության ծրագրերով, իսկ ՀՀ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում՝ վերապատրաստվել են 12 աշխատակիցներ:

Ներքին աուդիտի 2017թ. տարեկան ծրագրին համապատասխան 40 պետական ոչ առևտրային կազմակերպություններում իրականացվել է համապատասխանության, ֆինանսական աուդիտ, 6 բուժ. հաստատություններում («ՀՀ Արմավիրի մարզի Քեվորք և Անիթա Փակումեանների հիշատակի «Հիսուսի մանուկներ» ՓԲԸ, «Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Արմավիրի արյան փոխներարկման կայան» ՊՓԲԸ, «Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Վաղարշապատի հիվանդանոց» ՊՓԲԸ, «Էջմիածին ԲԿ» ՓԲԸ)՝ ֆինանսական աուդիտ, Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի 5 բաժիններում և 1 վարչությունում, Վաղարշապատի ՍԱՏԳ-ում՝ համապատասխանության աուդիտ, որոնց արդյունքների մասին կազմվել են աուդիտորական հաշվետվություններ և եզրակացություններ: Հաշվետվությունները ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարության միասնական կառավարման համակարգ: Հրավիրվել է մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի 4 նիստ, քննարկվել են աուդիտորական հաշվետվությունները, որի արդյունքում կայացվել են համապատասխան որոշումներ:

Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման ու համայնքային ծառայության հարցեր

2017թ. ընթացքում վարչական և ֆինանսական հսկողություն է իրականացվել մարզի 33 գյուղական համայնքներում:

2017թ. ապրիլի 2-ին ՀՀ Ազգային Ժողովի հերթական ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման միջոցառումների, ինչպես նաև ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջների կատարումն ապահովելու նպատակով իրականացվել է համագործակցություն մարզի

համայնքների ղեկավարների, տարածքային ընտրական հանձնաժողովների, ՀՀ անձնագրային և վիզաների վարչության Արմավիրի, Վաղարշապատի և Բաղրամյանի բաժանմունքների հետ:

Մարզի 36 համայնքներում կազմակերպվել և անցկացվել են 61 թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթներ, իսկ 48 համայնքներում անցկացվել է 103 համայնքային ծառայողների ատեստավորում: 2017թ. դեկտեմբերին <<Մաստեր սթայլ>> ՍՊԸ-ին հետ համատեղ կազմակերպվել և անցկացվել է մարզի 25 համայնքային ծառայողների հերթական վերապատրաստման դասընթացներ:

Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեությանն առնչվող հարցեր

2017թ. ապահովվել է համագործակցությունը հանրապետական գործադիր մարմինների բոլոր տարածքային ծառայությունների հետ, այդ թվում՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության, ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության, տարածքային զինկոմիսարիատների, սահմանապահ 2037 ռուսական և մարզի տարածքում տեղակայված հայկական զինվորական մասերի հետ:

2017թ. ևս մշտական աջակցություն է ցուցաբերվել ամառային և ձմեռային զորակոչի, զորահավաքային նախապատրաստության կազմակերպմանը, ուսումնավարժական պարապմունքներին, մարզային զորակոչային հանձնաժողովի նիստերի կազմակերպմանը և ապահովմանը, զորակոչից և հաշվառումից խուսափող զորակոչիկների հայտնաբերման գործընթացին, նախազորակոչային տարիքի պատանիների կցագրմանը, ռազմական ուսումնական հաստատություններում սովորել ցանկացողներով համալրմանը, տարածքային զինկոմիսարյատներից տեղեկատվության հավաքման ապահովմանը: Մշտական հսկողություն է իրականացվել ՀՀ կառավարության 27.05.2010թ. N 657-Ն որոշման կատարման ընթացքի, մարզի բոլոր համայնքներում և կազմակերպություններում զինվորական հաշվառման կազմակերպման նաև գրանցամատյանների ճիշտ վարման ուղղությամբ: Ապահովվել է զինվորական մասերի, մարզի գործադիր մարմինների ստորաբաժանումների փոխհարաբերությունները ու կապը համայնքների հետ:

Ապահովվել է մարզում անցկացված 2017թ. մարտի 23-ին <<Ապարանի ջրամբարի պատվարի փլուզման վտանգի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպումը>>, 2017թ. սեպտեմբերի 28-29-ը <<Հայաստանի ատոմային էլեկտրոկայանի միջուկային և ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը>> թեմաներով շտաբային ուսումնավարժություններին:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության համապատասխան հանձնաժողովին է ներկայացվել մարզի կազմակերպություններում այլընտրանքային ծառայության անցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը: Շարունակվել է ՌԴ մուտքի արգելք ունեցող քաղաքացիների դիմումների ձևակերպման, միգրացիոն պետական ծառայություն ուղարկման և դիմումների պատասխանները քաղաքացիներին իրազեկման գործընթացը:

2017թ. ընթացքում մարզ են այցելել ՀՀ Նախագահը, ՀՀ վարչապետը, նախարարները և մի շարք գործադիրի ներկայացուցիչներ:

Ֆինանսական բնագավառ

«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան ՀՀ պետական բյուջեով 31.12.2017թ. դրությամբ մարզի 97 համայնքներին նախատեսված 4388575.5 մլն. դրամ դոտացիան հատկացվել է ամբողջությամբ:

Համայնքների բյուջեները եկամտային մասով կատարվել են 100.0%, իսկ սեփական եկամուտները ապառքներով՝ 100.5%, աճը 2016 թվականի համեմատ կազմել է 6.8%-ով:

Փաստացի հավաքագրված սեփական եկամուտների 2628.7 մլն.դրամ ընդհանուր ծավալում հողի հարկի տեսակարար կշիռը կազմել է 29.0%, գույքահարկինը՝ 39.6%, վարձակալությամբ տրված գույքի վարձավճարներինը՝ 5.6%:

ՀՀ Արմավիրի մարզի համայնքապետարանների, ՀՈԱԿ-ների, բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատավարձերի գծով պարտքը կազմել է 13511.8հազ. դրամ:

Քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության բնագավառ

2017թ. ՀՀ պետական բյուջեով ՀՀ Արմավիրի մարզպետարանի ծրագրերով մարզին հատկացվել է 49,029.3հազար դրամ, որից `

- Թաիրով գյուղի միջնակարգ դպրոցի վերանորոգման համար՝ 29 400.7 հազար դրամ
- Շենիկ համայնքի մշակույթի տան վերանորոգման համար՝ 19,588.6 հազար դրամ:

Շինարարական աշխատանքներն ավարտվել են 2017թ. սահմանված ժամկետում՝ հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխան:

2017թ. պետական բյուջեի պահուստային ֆոնդից ՀՀ կառավարության 16.02.2017թ. N 153-Ն որոշմամբ հրատապ ծրագրերի իրականացման նպատակով նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման համար մարզին հատկացվել է 15,680.0 հազար դրամ, որով կազմվել և ավարտին են հասցվել բոլոր 19 ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում ծրագրով հատկացվել է 52,000.0 հազար դրամ, որով իրականացվում են 4 նախակրթական օբյեկտների և Մուսալեռ համայնքի մարզադահլիճի վերանորոգման աշխատանքները:

Ըստ հաստատված և փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերի՝ ՀՀ կառավարության 30.03.2017թ. N 426-Ն որոշմամբ հրատապ ծրագրերի իրականացման համար հատկացվել է 326,004.9 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսված է 4 կրթական, 1 մշակութային հաստատության, 2 բազմաբնակարան շենքերի տանիքների, մարզպետարանի ջեռուցման համակարգի վերանորոգում, Լուկաշին համայնքի հանրակացարանի կոյուղու կեղտաջրերի կուտակման հորի և կեղտաջրերի հեռացման համակարգի, ինչպես նաև մեկ բազմաբնակարան շենքի երրորդ հարկի և տանիքի կառուցում:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 571-Ն որոշմամբ մարզի հրատապ խնդիրների լուծման համար հատկացվել է 122,497.7 հազար դրամ, որից համապատասխանաբար 12,296.0 և 13,510.0 հազար դրամի շրջանակներում կիրականացվի Դալարիկ համայնքի Կոմիտասի փողոցի թիվ 5 և Բաղրամյան /Բաղր./ համայնքի Արցախի փողոցի թիվ 37 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգումը: Հատկացված գումարից 49,942.8 հազար դրամ տրամադրվել է նաև Գրիբոյեդով համայնքի միջնակարգ դպրոցի լոկալ ջեռուցման համակարգի կառուցման, 35,705.0 հազար դրամ էլ՝ Շենավան, Ծաղկունք համայնքների գազիֆիկացման, Քարակերտ համայնքի թվով 7 բազմաբնակարան շենքերի 168 բնակարանների գազաֆիկացման, Հացիկ համայնքի 8-րդ փողոցի

700 մ երկարությամբ գազագծի անցկացման, Քարակերտ համայնքի 5 հարկանի շենքի նոր ջրագծի կառուցման և Տարոնիկ համայնքի խմելու ջրագծի ենթակայանի կառուցման համար: Բոլոր օբյեկտների/թվով 24 շինարարական օբյեկտ/ պայմանագրով նախատեսնված շինարարական աշխատանքներն ավարտվել են 2017թ., բացի Նոր Կեսարիա համայնքի միջնակարգ դպրոցի և Հայկավան համայնքի մշակույթի տան վերանորոգման օբյեկտների, որոնց ավարտը նախատեսնված է 2018թ. ապրիլին: Աշխատանքները ընթացքի մեջ են:

ՀՀ կառավարության 2017թ. 24 օգոստոսի 24-ի N 1070-Ն որոշմամբ պահուստային ֆոնդից մարզի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար Արմավիրի մարզին հատկացնել է 1,800.0հազար դրամ, որի շրջանակներում իրականացվել են «Զարիշատ /Արամ/ Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ինֆեկցիոն բաժանմունքի մասնաշենքի հիմնանորոգման, Մրգաստան համայնք տանող ճանապարհի մասնակի վերանորոգման, Նոր Արմավիր համայնքի նախակրթարանի վերանորոգման, Ջրառատ և Նորապատ համայնքների փակման ենթակա աղբավայրի մաքրման ծրագրերի նախագծահետազոտական աշխատանքները:

Ուսումնասիրվել և ճշգրտվել է մարզում առկա վթարային օբյեկտների, կիսակառույցների, ինչպես նաև առաջնահերթ հիմնանորոգման կարիք ունեցող օբյեկտների ցանկը և ծրագրերում ներառելու նպատակով առաջարկություն է ներկայացվել համապատասխան մարմիններին:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017թ. հունվարի 12-ի <<Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2017թ. աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին>> թիվ 5-Ա հրամանով հաստատված ծրագրի և ժամանակացույցի համաձայն վարչական հսկողություն է իրականացվել մարզի 32 համայնքներում:

Վերահսկողություն է իրականացվել համայնքների քաղաքաշինության գործունեությունների, այդ թվում նաև անօրինական շինարարությունների կանխման, կասեցման և դրա հետևանքների վերացման ուղղությամբ:

Ուսումնասիրվել և հաշվարկվել է ՀՀ Արմավիրի մարզի 9 համայնքներում 2017թ. ընթացքում արտակարգ իրավիճակների՝ ուժեղ քամու, պտտահողմի և կարկտահարության հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող շենք - շինություններին պատճառված վնասները և ներկայացվել է համապատասխան մարմիներին: ՀՀ կառավարության որոշմամբ տրամադրել է փոխհատուցում ՀՀ Արմավիրի մարզի Գետաշեն համայնքում պտտահողմի, քամու և Խորոնք համայնքում գազի բալոնի պայթյունի հետևանքով տուժած ֆիզիկական անձանց:

ՀՀ Արմավիրի մարզպետի 2017թ. սեպտեմբերի 8-ի N 76-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կազմում մասնակցություն է ցուցաբերվել ՀՀ Արմավիրի մարզպետարանի պատվիրատվությամբ ավարտված 24 շինարարական օբյեկտների շահագործման ընդունող հանձնաժողովի աշխատանքներին:

Կազմվել են ՀՀ Արմավիրի մարզի 2018-2020թթ. քաղաքաշինության, ճանապարհաշինության և էներգետիկայի ոլորտների միջնաժամկետ ծախսային ծրագրերը/ՄԺԾԾ/ և ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություններին:

Նոր կառուցվող, հինանորոգվող և վերանորոգվող շենք - շինությունների նախագծման ու կառուցման աշխատանքներում հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ապահովման նպատակով առաջարկվել է բոլոր համայնքների ղեկավարներին՝ իրենց կողմից տրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքներում պարտադիր ներառել հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումները, հետևել դրանց

կատարմանը՝ նախագծա-նախահաշվային փաստաթղթերի համաձայնեցման, շինարարության և շինարարության ավարտի փաստագրման ժամանակ:

Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառ

ՀՀ Արմավիրի մարզի ճանապրհների ընդհանուր երկարությունը կազմում է 617.2կմ, որից 123.2կմ միջպետական նշանակության, 91.6կմ՝ հանրապետական և 402.4կմ մարզային նշանակության: Պետական բյուջեից ՀՀ Արամվիրի մարզպետարանի մարզային նշանակության ճանապարհների ձմեռային և ընթացիկ պահպանման և շահագործմանը հատկացվել է 46.905մլն դրամ, որից 8.4մլն դրամը նախատեսվել և ծախսվել է 51.3կմ երկարությամբ ճանապրհի ձմեռային պահպանության համար (որը կազմում է ընդհանուր ճանապարհի 12.7% -ը), իսկ 38.5մլն դրամը նախատեսվել և ծախսվել է 33.4կմ երկարությամբ ճանապարհի ընթացիկ պահպանման ու շահագործման վրա (որը կազմում է ընդհանուր ճանապարհի 8.3%-ը):

22.09.2017թ. 036/12.803-17 գրությամբ ՀՀ Արմավիրի մարզպետին է դիմել Ջանֆիդա համայնքի ղեկավարը Տ-3-17 <<Հ-15 Ջանֆիդա -Թուրքիայի սահման>> տեղական նշանակության ավտոճանապարհի 5.4կմ հատվածի ձախ կողմում քանդված բետոնի պարապետի (պատնեշի) և ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման համար: ՀՀ Արմավիրի մարզպետի մոտ տեղի ունեցած քննարկման արդյունքում <<Ճանշինվարպետ>> ՍՊԸ-ի կողմից եռօրյա ժամկետում այն վերանորոգվել է:

Ի կատարումն ՀՀ վարչապետի N01/297/[400065]-17 հանձնարարականի ուսումնասիրվել է մարզի միջհամայնքային բոլոր ճանապարհների (402.4կմ) վիճակը և առաջարկություններ ներկայացվել վերանորոգման վերաբերյալ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի ֆինանսավորման պայմանագրի համաձայն հիմնանորոգվել է Ջանֆիդա համայնքի N 1 փողոցի 2.64կմ հատվածը ՝ 401.5մլն դրամ ընդհանուր արժողությամբ:

29.11.2017 թվականի թիվ 02/24.13/26144-17 գրությամբ ՀՀ վարչապետին է դիմել Զարթոնք համայնքի ղեկավարը՝ Զարթոնք –Արտաշար –Եղեգնուտ 11.1կմ երկարությամբ մարզային նշանակության ճանապարհի հիմնանորոգման խնդրանքով: Մեր կողմից ուսումնասիրվել է ճանապարհը ամբողջությամբ և ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարին են ներկայացվել ուսումնասիրության արդյունքները:

Մարզի գրեթե բոլոր հանայնքները կապված են տրանսպորտային կապով մարզկենտրոնի հետ: Մարզի համայնքներից մարզկենտրոն և տարածքային կենտրոնների ուղղություններով գործում է 11 ավտոբուսային (թվով 21 ավտոբուս) և 11 միկրոավտոբուսային (թվով 25 միկրոավտոբուս) ներմարզային երթուղիներ, իսկ մարզի համայնքներից դեպի մայրաքաղաք գործում է 14 ավտոբուսային և միկրոավտոբուսային միջմարզային երթուղիներ:

2017թ. առաջին կիսամյակում օրենքով սահմանված կարգով կազմակերպել և անցկացվել է <<Վաղարշապատ -Գայ>>, <<Վաղարշապատ -Արմավիր>>, <<Վաղարշապատ -Ամբերդ>> ավտոբուսային և <<Արմավիր-Նորավան >> միկրոավտոբուսային երթուղիների մրցույթ:

Մարզպետի 13.12.2006 թվականի N 143 կարգադրության համաձայն ուսումնասիրվել է ներմարզային երթուղիների ցանցը, մեքենաների տեխնիկական վիճակը և երթուղիների սպասարկման որակը: <<Հարավկովկասյան երթուղի>> ՓԲԸ-ի տնօրինության մասնագետների հետ համատեղ ուսումնասիրվել է մարզի տարածքով անցնող երթուղային գծանցները և կազմվել է համապատասխան ակտ նկատված թերությունները վերացնելու և անօրինական գծանցները փակելու, օրինականացնելու համար:

Աղբահանության: 2017թ. փետրվար ամսին կազմվել է Արմավիրի մարզի սանիտարական մաքրման սխեման: Մշակված սխեմային համապատասխան և աղբահանության օրացուցային գրաֆիկի հիման վրա մարզի բոլոր 97 համայնքներում իրականացվում է աղբահանություն: Մարզի 97 համայնքներից 45-ում աղբահանությունը կատարվում է պայմանագրային սկզբունքով, իսկ 52-ում աղբահանության պայմանագրերը կկնքվեն համայնքների ավագանիների որոշումների հիման վրա: Սանիտարական մաքրման և աղբահանության գործընթացը շարունակական է և գտնվում է մարզպետարանի մշտական վերահսկողության ներքո: Մարզպետի հանձնարարությամբ իրականացվել են անօրինական աղբավայրերի մաքրման և փակման աշխատանքներ:

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ <<Մաքուր Հայաստան>> ծրագրի շրջանակներում մարզի համայնքներում արձանագրվել, քարտեզագրվել և նկարահանվել է 171 աղբավայր, որից մաքրվել է 130-ը: Նալբանդյան, Փարաքար, Արաքս /Վաղ. տ./, Արտիմետ գյուղական համայնքներին և Արմավիր քաղաքին առաջարկվել է մաքրման աշխատանքների վերաբերյալ համապատասխան ծրագիր ներկայացնել: «Մաքուր Հայաստան» ծրագրի գործողությունների շրջանակներում, Մաքուր Հայաստան ինտերակտիվ վիրտուալ տեղեկատվական համակարգի իրականացման գործընթացին ցուցաբերվել է ակտիվ մասնակցություն:

2017թ. մայիսի 27-ի, հուլիսի 29-ի, հոկտեմբերի 21-ի համապետական շաբաթօրյակներին իրենց մասնակցությունն են ունեցել շուրջ 32000 մարդ: Այդ աշխատանքներում ներգրավված է եղել տարբեր նշանակության 214 տեխնիկա:

Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառ

Մարզի 124211,4հա վարչական տարածքում 97051,3հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից 48787,6հա 2017թ. օգտագործվել է գյուղատնտեսական արտադրության մեջ՝ 32953,7հա վարելահողեր, 6791,5հա խաղողի և 9042,4հա պտղատու այգիներ:

Գյուղատնտեսական արտադրության մեջ ընդգրկված հողատարածքները, ըստ առանձին մշակաբույսերի տնօրինվել են հետևյալ կերպ.

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

հ/հ	Մշակաբույսի անվանումը	Տարածքը /հա/	Միջին բերքը ց/հա	Համախառն բերքը /հազ. տոննա/	Այդ թվում՝ հավաքված է կրկն. միջշարային տարածություններից
1	Հացահատիկ	5186	38,4	19,738	-
2	Հատիկաընդեղեն	314,7	30,2	0.91	-
3	Կարտոֆիլ	1666,6	322	56,199	3,266
4	Բանջարեղեն	12836,4	329,8	447,77	24,36
5	Բոստան	4942,1	301.5	149	0,21
6	Բազմ. և միամյա խոտաբ.	9780,9	115,4	141,41	16,27
7	Պտուղ	9042,4/7779,1	103,5	80,54	
8	Խաղող	6791,5/6268,6	144	90,3	
Ընդամենը		48787,6			

2017թ. գյուղատնտեսական տարում 2016-ի հետ համեմատությամբ մարզում ավել է օգտագործվել 87,9հա հողատարածություն: 2017թ մարզում հիմնվել են 438,24հա բազմամյա տնկարքներ, որից 363,16հա պտղատու և 75,08հա խաղողի այգիներ:

2017թ գյուղատնտեսական տարին սկսվել էր բարեհաջող և գրեթե բոլոր մշակաբույսերի գծով սպասվում էր բարձր բերք: Մարզի վարչական տարածքը ապահովագրված չէ բնակլիմայական աղետների վնասներից: 2017թ. ապրիլի 26-ին տեղի ունեցած ցրտահարությունը, ինչպես նաև մայիսի 24-ին, 27-ին և հունիսի 12-ին տեղի ունեցած կարկտահարությունները մեծ վնաս պատճառեցին մարզի գյուղատնտեսական արտադրությանը: Տարերային աղետների հասցրած վնասները գնահատվել են

շուրջ 5մլրդ. դրամ: Կարկտահարության հասցրած վնասները հնարավորինս մեղմելու նպատակով ՀՀ կառավարության 23.11.2017թ N 1489-Ն որոշմամբ փոխհատուցվել է կարկտահարություններից տուժած հողօգտագործողների ոռոգման ջրի վարձը՝ 230,352մլն.դրամով և հողի հարկը՝ 41,485մլն. դրամով: Կարկտահարության ռիսկերը մեղմելու նպատակով մարզի Լենուղի համայնքում տեղակայվել է 1 հակակարկտային կայան, իսկ մարզի 7 համայնքներում 7 սուբյեկտներին պատկանող 77,9 հեկտար խաղողի և պտղի տարածությունները պատվել են հակակարկտային ցանցերով:

2017թ ընթացքում մարզի գյուղացիական տնտեսություններից մթերող կազմակերպությունների կողմից մթերվել է 3903տ. պտուղ, 6473տ բանջարեղեն և 44304տ խաղող, մեծ աջակցություն է ցուցաբերվել առանձին տնտեսվարող սուբյեկտներին և արտահանող կազմակերպություններին գյուղատնտեսական մթերքների արտադրության և արտահանման գործում:

2017թ. կազմակերպվել և համակարգվել են համայնքներում առկա անասնագլխաքանակի համատարած հաշվառման աշխատանքները: 2017թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում հաշվառվել է 61332 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ, որից կովեր 21839, մանր եղջերավոր 106656, խոզեր 26681, 781908 թռչուններ: Հաշվետու ժամանակահատվածում համակարգվել և վերահսկվել է մարզային անասնաբուժական ծառայության գործունեությունը, հակահամաճարակային միջոցառումները իրականացվել են ամբողջությամբ, հակահամաճարակային իրավիճակը բնութագրվում է կայուն: 2017թ. ընթացքում արտադրվել է 7498տ տավարի, 2250տ ոչխարի, 1040տ խոզի, 887տ թռչնի միս, 260տ ձուկ, 53100տ կաթ, 211,7տ բուրդ և 42մլն. հատ ձու:

Համակարգվել է մարզում գործող <<Ոռոգում-Ջրառ>> ՓԲԸ-ի 2 մասնաճյուղերի և 7 ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունը՝ ոռոգման համակարգի սպասարկման, կառուցման ու վերականգնման, ոռոգման ջրի վարձավճարների գանձման ուղղությամբ: ՀՀ Արմավիրի մարզպետի 15.03.2017թ. թիվ 16 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից վերահսկվել և կարգավորվել են տարաբնույթ նշանակության ջրատարների, մայր ջրանցքների և ջրամղիչ կայանների մաքրման և վերականգնման աշխատանքները: Արդյունքում 245,87կմ միջտնտեսային, 4616,4կմ ներտնտեսային ցանցերը, 192 խորքային հորերը և 63 պոմպակայանները պատրաստ են եղել ջրամատակարարմանը,որը սկսվել է ապրիլի 10-ին:

2017թ բնութագրվել է որպես սակավաջուր, քանի որ 90մլն մետր խորանարդով պակաս էր լցվել Ախուրյանի ջրամբարը, իսկ գետերում ջրի ելը նվազել էր շուրջ 20%: Ոռոգման բնագավառում ստեղծված լարվածությունը մեղմելու նպատակով սահմանվել է ջրաշրջանառություն և կազմվել ջրամատակարարման հստակ գրաֆիկ, միաժամանակ վերանորոգվել են 24խորքային հորեր և ոռոգման նպատակով օգտագործվել են համայնքների հաշվեկշռում գտնվող խմելու ջրի նպատակին ծառայող 51 խորքային հորերի հզորությունները:

2017թ դեկտեմբերի 31-ի դրությամբ մարզի 29574 ջրօգտագործողներին մատակարարվել է 250,1միլիոն մետր խորանարդ ոռոգման ջուր 2,75 մլրդ դրամ հասույթով, որի դիմաց գանձվել է 1,502 մլրդ դրամ կամ գանձման մակարդակը կազմել է 54,6%: Գույքագրել է մարզի տարածքով հոսող Արաքս, Մեծամոր և Քասախ գետերի, ինչպես նաև հեղեղատարների հուների մաքրման և ափապատնեշների ամրացման նպատակով իրականացվելիք աշխատանքները և ներկայացրել ՀՀ կառավարություն: Արդյունքում ՀՀ կառավարության 23.02.2017թ N 212-Ն որոշմամբ հատկացված 21,99մլն դրամ գումարով վերականգնվել է Բագարան համայնքի վարչական տարածքում Արաքս գետի շուրջ 300մ երկարությամբ փլուզված ափապատնեշը:

Մարզպետի մշտական ուշադրության կենտրոնում է եղել հողերի մելիորատիվ վիճակի բարելավման, մարզում առկա 280կմ երկարությամբ բաց կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման և վերանորոգման աշխատանքները: Ընթացիկ տարում պետբյուջեի միջոցների հաշվին 13 համայնքներում մաքրվել են 57,206կմ երկարությամբ բաց դրենաժային ցանց: Այս բնագավառում

դեռևս հիմնախնդիր է մնում առկա շուրջ 280կմ երկարությամբ փակ դրենաժային համակարգի մաքրումը և վերանորոգումը:

ՀՀ 2010-14թթ սերմնաբուծության զարգացնան ծրագրի շրջանակներում 2017թ գարնանացանի համար անհրաժեշտ սերմացուների հայտերը մարզպետարանը սահմանված կարգով ներկայացրել է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն: Գարնանացանի և աշնանացանի աշխատանքները խթանելու նպատակով գյուղացիական տնտեսություններին որպես աջակցություն տրամադրվել է.

1. 2100 կգ գարնանացան գարու՝ 1կգ-ը 130դրամով սերմացու, որը բաշխվել է 2համայնքների 5 շահառուների,որոնք 10,5 հա-ի վրա կատարել են ցանքսի աշխատանքներ:
2. 825կգ առվույտի՝ 1կգ-ը 1500դրամով սերմացու, որը բաշխվել է 1 համայնքի 12 շահառուների, որոնք 33հա-ի վրա կատարել են ցանքս:
3. 1040կգ սիսեռի սերմացու, որը բաշխվել է 1 համայնքի 3 շահառուների, որնք 8հա-ի վրա կատարել են ցանքսի աշխատանքներ:

2017թ. մարզի հողօգտագործողներին որպես աջակցություն ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով 2017թ հատկացվել է.

1. 6000 տոննա ազոտական պարարտանյութ, որից վճարվել և ներկրվել է 4428,45 տոննան, որը բաշխվել է թվով 8894 շահառուների:
2. 200տոննա ֆոսֆորական պարարտանյութ, որից վճարվել և ներկրվել է 125,1 տոննա:
3. 200տոննա կալիումական պարարտանյութ, որից վճարվել և ներկրվել է 145,2 տոննա:
4. 392000 լիտր դիզելային վառելանյութ, որից վճարվել և ներկրվել է 107103 լիտր, որը բաշխվել թվով 312 շահառուների:

Ֆինանսական վարձակալության լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում մարզի համայնքները ձեռք են բերել 9 տրակտորներ և 2 գյուղատնտեսական գործիքներ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգում գործող գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի մասնագիտական ծառայությունների գործունեությունը և մկնանման կրծողներով տարածվածության հաշվառման մոնիթորինգի արդյունքներով գարնանը և աշնանը մարզին հատկացվել է 828,8կգ ռոդիֆակում տեսակի մկնասպան պրեպարատ, որը բաշխվել է մարզի համայնքներին, որոնք 10360 հա վրա իրականացրել են պայքարի աշխատանքներ:

Համակարգվել է համայնքներում բազմամյա տնկարկների հիմնման և համապատասխան փաստաթղթային ձևակերպման աշխատանքները:

Գյուղատնտեսության աջակցության մարզային կազմակերպության հետ սերտ համագործակցության է եղել գյուղատնտեսական արտադրության ոլորտին օգնություն ցուցաբերելու, առաջավոր տեխնոլոգիաների ներդրման, բիզնես- ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքների կազմակերպման բնագավառներում: Գյուղատնտեսական արտադրության վարկավորման գործընթացում հիմնական վարկատուն եղել է Հայգյուղփոխբանկը, որը հաշվետու տարում մարզի 93 համայնքների 3098 վարկառուներին տրամադրել է 5,13մլրդ դրամ վարկ, որից 0,794 մլրդ դրամ վարկը պետական սուբսիդավորմամբ:

<<Հայաստան ծառատունկ>> ծրագրի միջոցով, ընթացիկ տարում կազմակերպվել ու իրականացվել են տնկումներ շուրջ 3205ծառեր և թփերի տնկիներ: Մարզի 13 համայնքների տարաբնույթ կազմակերպություններում/գյուղապետարան, դպրոց, եկեղեցի, մշակույթի տուն, անտառ պուրակներ, զբոսայգիներ ու ճանապարհների եզրեր/ իրականացվել է ծառերի ու թփերի հիմնումներ, ավելի քան 3 հեկտար ընդհանուր մակերեսով: Համակարգվել են շրջակա միջավայրի և բնապահպանության օրենսդրության կենսագործման աշխատանքները: Համակարգվել և

կազմակերպվել է օգտակար հանածոների արդյունահանման համար հողհատկացման տարածքների արդյունավետ օգտագործման, շրջակա միջավայրի պահպանման հարցերը:

Հողաշինության և հողօգտագործման բնագավառ

2017թ. հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների հաստատման նպատակով սահմանված կարգով ՀՀ կառավարություն են ներկայացվել մարզի Տարոնիկ, Շենիկ, Արմավիր, Պտղունք և Արաքս /Արմ./, Արևադաշատ, Խանջյան, Նալբանդյան, Նորապատ, Կողբավան, Արշալույս համայնքներում հողերի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ հողաշինական գործերը: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունները ներկայացվել են համայնքների ղեկավարներին՝ առաջարկելով համաձայն ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1918–Ն որոշման ընդունել ավագանու համապատասխան որոշումներ և կատարել պետական գրանցումներ:

ՀՀ Արմավիրի մարզպետի համապատասխան կարգադրություններով ստեղծված հանձնաժողովի կազմում մասնակցություն է ցուցաբերվել մարզի թվով 33 համայնքներում իրականացվող վարչական հսկողությանը: Իրականացվել է համայնքների վարչական սահմաններում գտնվող հողամասերի աճուրդային վաճառքի և վարձակալության տրամադրման վերաբերյալ տվյալների հավաքագրում, ամփոփում և տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

ՀՀ կառավարության 17.09.2009թ. N 1066-Ն որոշմամբ և ՀՀ Արմավիրի մարզպետի 12.11.2009թ. թիվ 151 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կազմում կազմակերպված ուսումնասիրությունների արդյունքում մարզի 22 համայնքների համար տրվել է եզրակացություն՝ բարձրաժեք հողատեսքերը ցածրաժեք հողատեսքերի փոխադրելու վերաբերյալ/ընդամենը՝ 275.7 հա/:

2017թ. ապրիլի 18-28-ը ներառյալ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության հետ համատեղ իրականացվել են տեսչական ստուգումներ մարզի 15 համայնքներում:

Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010թ. հունիսի 1-ի <<Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին>> N 186-Ն հրամանի դրույթների՝ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվում ՀՀ Արմավիրի մարզի Նոր Արտագերս, Զարթոնք, Գայ, Տանձուտ, Արտիմետ գյուղական համայնքների կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման առաջարկությունները: Ստացված համապատասխան եզրակացությունները ներկայացվել են համայնքների ղեկավարներին:

ՀՀ կառավարության 20.07.2017թ. N 853-Ա որոշման 2-րդ կետով սահմանված կարգով իրականացվել են Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքի Իսի-Լե-Մուլինոյի փողոցի 1 հասցեում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 4.9134 հեկտար հողամասի չափագրման և նպատակային նշանակության փոփոխության աշխատանքներ: Էջմիածին քաղաքի ավագանու համապատասխան որոշումը ներկայացվել է ՀՀ ԿԱ պետական գույքի վարչություն՝ պետական գրանցման համար:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 26.01.2017թ. թիվ 01/16.1/320-17 հանձնարարականի համաձայն՝ ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության բջջային կայանների տեղակայման վայրերի հողերի նպատակային նշանակությունները համապատասխանեցնելու նպատակով թվով 34 համայնքներում սահմանված կարգով կազմվել և տարածքային կառավարման և զարգացման նախարարություն են ներկայացվել հողաշինարարական գործերը: Միջգերատեսչական

հանձնաժողովի կողմից տրված 13.11.2017թ. N 130 եզրակացությունը ևս սահմանված կարգով ներկայացվել է համայնքների ղեկավարներին, կատարվել են համապատասխան պետական գրացումներ:

Առողջապահության բնագավառ

ՀՀ Արմավիրի մարզի առողջապահական համակարգում գործում է 58 բուժհաստատություն՝ 52-ը՝ համայնքային և 6-ը՝ մարզպետարանի ենթակայության: Առողջապահության համակարգում աշխատում է 397 բժիշկ, միջին բուժանձնակազմի թիվը 881 է: Մեկ բժիշկը սպասարկում է 671 բնակչի (տարվա ընթացքում հիվանդ բժիշկ տարեկան 10000 բնակչի հաշվով կազմում է՝ 14,9 բժիշկ): Մեկ բնակչին պետության կողմից բուժսպասարկման համար 2017թ. նախատեսվել է 10835դրամ:

Մարզի բուժհաստատությունների մահճակալների թիվը 389-ն է: Մահճակալների ծանրաբեռնվածությունը 2017թ. ընթացքում եղել է 54,4%: Նույն ժամանակահատվածում վճարովի ծառայությունները կազմել են 330,195,9ՀՀ դրամ: 2017թ. հաշվետու ժամանակահատվածը, եթե համեմատենք 2016թ. հետ, ապա ունենում ենք աճ 18.049,6 ՀՀ դրամ ավել վճարված գումար կամ աճը կազմել է 5.7 %:

Պետական առողջապահական ծրագրերի իրականացման նպատակով 2017թ. տարեկան գլոբալ բյուջեով մարզի առողջապահական հաստատություններին հատկացված 2,882,154,173ՀՀ դրամ, համամասնորեն առ 01.01.2018թ. դրությամբ, ընդունված կատարողականը կազմել է 2.856.190.7 հազ., այդ թվում մարզպետարանի ենթակայության բուժհաստատություններինը կազմել է՝ 1.985.527.3 հազ. ՀՀ դրամ:

Մարզպետարանի ենթակայության բոլոր բուժհաստատություններն ապահովված են անհրաժեշտ քանակությամբ հակափայտացման շիճուկով, հակաբոտուլինային շիճուկով, օձի հակաթույնով, հակագանգրենոզ շիճուկով, հակափայտացման անատոքսինով, հակակատաղության վակցինայով:: 2017թ. արձանագրվել է օձի խայթոցի 31 դեպք, որոնցից մեկը ավարտվել է մահվան ելքով:

2017թ մարզի պոլիկլինիկական ծառայությունների տուբերկուլոզային կաբինետների կողմից հաշվառման են վերցվել 104 հիվանդներ, որից 54 առաջնակի: Կատարվել է խորխի 1364 հետազոտություններ:

2017թ. Արմավիրի և Վաղարշապատի պոլիկլինիկաների կողմից հետազոտության նպատակով Երևան են ուղարկվել 2160 զորակոչիկներ, վճարվել է 1,458.2 ՀՀ դրամ ճանապարհածախս:

Մարզում շտապ օգնության կանչերն իրականացվում են 14 շտապ օգնության մեքենաների միջոցով: Մարզպետարանի ենթակայությամբ գործող բուժհաստատություններում 2017 թվականի ընթացքում իրականացվել է 32863 կանչ:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մարզում ծնվել են՝ 2295 երեխաներ, որից 1384-ը մարզի ծննդատներում: Նույն ժամանակահատվածում մարզում գրանցվել է 0-18 տարեկանների երեխաների մահվան 18 դեպք, որից 0-1 տարեկան՝ 8 դեպք: Մանկական մահացության ցուցանիշը կազմել է 3.2 պրոմիլե: Ընդհանուր մահացությունը 1872, որից՝ 150-ը մարզի հիվանդանոցներում, բնական աճը՝ 423: Մայրական մահացության դեպք չի գրանցվել:

2017թ. հաշմանդամներին, զոհված ազատամարտիկների ընտանիքների անդամներին առողջարանային վերականգնողական բուժման համար տրամադրվել է 116ուղեգիր, որից Ջերմուկ՝ 6, Գանձաղբյուր՝ 82, Վանաձոր՝ 17: Արարատ մանկական առողջարան՝ 11: Դիլիջանի մանկական հակատուբերկուլոզային առողջարանի ուղեգրեր են հատկացվել մարզի տուբերկուլյոզով հիվանդ ունեցող ընտանիքների կոնտակտավոր մինչև 18 տարեկան թվով 332 երեխաների:

Ապահովվել է Երևան և մարզային հիվանդանոցներ ուղեգրված հիվանդների համամասնությունը: Մարզպետարան դիմած քաղաքացիներին տրվել են 33 միջնորդագրեր և 75 ուղեգրեր՝ մարզի տարածքում գործող հիվանդանոցներում և հանրապետության մասնագիտական բուժհաստատություններում պետական պատվերի շրջանակներում ստացիոնար բուժում ստանալու և հետազոտության ենթարկվելու համար:

2017թ. ընթացքում կենտրոնական գնմամբ և մարդասիրական ճանապարհով տարբեր հիվանդությունների բուժման նպատակով ստացվել և մարզի բուժհաստատություններին է բաշխվել 166.130.890 հազ. ՀՀ դրամ արժողությամբ տարբեր դեղամիջոցներ, որից 77,775,901 հազ. ՀՀ դրամ արժողությամբ հակադիաբետիկ դեղամիջոցներ:

Մարզում դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառված է եղել 7175 դիաբետով հիվանդ, այդ թվում՝ միայն ինսուլին ստացող՝ 792, ինսուլին և հաբ՝ 466, միայն հաբ՝ 5917:

Մարզպետարանի ենթակայության առողջապահական հիմնարկներից ոչ մեկն աշխատավարձի պարտքեր չունեն:

Սոցիալական ապահովության բնագավառ

2017թ. ընթացքում կազմակերպվել և իրականացվել են մարզի երեք ՍԱՏԳ-ներում ընտանիքների անապահովության գնահատման համակարգով հաշվառված ընտանիքների փաստագրման աշխատանքները: 2018թ. հունվարի 1-ի դրությամբ փաստագրված ընտանիքների թիվը 6775 է, որոնցից նպաստառու են 4525-ը, սոցիալական նպաստ է ստացել 1108 ընտանիք:Նշված ժամանակահատվածում ավանդի փոխհատուցման գումար է ստացել 304 ընտանիք:

Մարզում խոցելի խմբերի թվաքանակի տվյալները 2016թ. և 2017թ. տարեկան կտրվածքով

Բովանդակություն	Արմավիր	Վաղարշապատ	Բաղրամյան	Ընդամենը մարզում
Փաստագրված ընտանիքների թիվը /2016թ. դեկտեմբեր /	2619	3546	808	**6973**
Փաստագրված ընտանիքների թիվը /2017թ. դեկտեմբեր /	2566	3396	813	**6775**
Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը /2016թ. դեկտեմբեր /	1786	2369	585	**4740**
Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը /2017թ. դեկտեմբեր /	1708	2249	568	**4525**
Սոցիալական նպաստ ստացող ընտանիքների թիվը /2016թ. դեկտեմբեր /	455	586	100	**1141**
Սոցիալական նպաստ ստացող ընտանիքների թիվը /2017թ. դեկտեմբեր /	442	569	97	**1108**
Գրանցված գործազուրկների թիվը /2016թ. դեկտեմբեր /	3001	1858	1502	**6361**
Գրանցված գործազուրկների թիվը /2017թ.դեկտեմբեր/	3074	1490	1321	**5885**

ՀՀ Արմավիրի «Մարզպետարանի կողմից իրականացվող ծրագրերի այլ նպաստներ բյուջեից» հոդվածով 2017թ. ընթացքում դրամական օգնություն է հատկացվել սոցիալապես անապահով 640 ընտանիքների՝ 25 783.0 հազ. դրամ գումարի չափով:

2017թ. մարզի զբաղվածության տարածքային գործակալություններում հաշվառված են աշխատանք փնտրող 7380 մարդ, որոնցից գործազուրկի կարգավիճակ են ստացել 5885-ը: Զբաղվածության տարածքային կենտրոնների օժանդակությամբ աշխատանքի են տեղավորվել 556 աշխատանք փնտրող անձինք:

Գործատուի և աշխատանք փնտրողի անմիջական հաղորդակցման միջոցով՝ աշխատանք փնտրողի կայուն զբաղվածության և գործատուի մոտ առկա թափուր աշխատատեղի արդյունավետ համալրման ապահովման նպատակով 18.10.2017թ. Արմավիրի զբաղվածության տարածքային կենտրոնի կողմից կազմակերպվել է աշխատանքի տոնավաճառ, որին մասնակցել են շուրջ 755 աշխատանք փնտրողներ, 28 գործատուներ, որոնց կողմից ներկայացվել է 53 թափուր աշխատատեղ: Թափուր աշխատատեղերի համար հայտեր են ներկայացրել երիտասարդ աշխատանք փնտրողները, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձինք: Տոնավաճառի արդյունքում աշխատանքով ապահովվել են 51 աշխատանք փնտրող անձինք:

Արմավիրի մարզային սոցիալական ապահովագրության տարածքային կենտրոններում հաշվառված են 39749 կենսաթոշակառուներ, այդ թվում՝ ըստ տարածքների՝

Արմավիրի ՏԿ - 19809 մարդ
Վաղարշապատի ՏԿ - 17501 մարդ
Բաղրամյանի ՏԿ - 2398 մարդ:

ՀՀ վարչապետի <<Դպրոցականների 2017թ. ամառային հանգստի կազմակերպման նպատակով միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին>> 13.03.2017թ. N 236-Ա որոշման համաձայն կազմակերպվել է մարզի զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողազուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան թվով 303 երեխաների ամառային հանգստի /20-օրյա/ կազմակերպումը Հանքավանի <<Հասմիկ>> ճամբարում:

ՀՀ կառավարության 09.06.2005թ. թիվ 947-Ն որոշմամբ հաստատված <<Զոհված /մահացած/ կամ հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների կարիքավոր ընտանիքներին բնակարանային հաշվառման վերցնելու և բնակարանային պայմանները բարելավելու նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու>> կարգի համաձայն Արմավիրի մարզպետարանում հաշվառված է բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող Արցախյան պատերազմում զոհված՝ 36 և հաշմանդամ դարձած՝ 110 զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիք: Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետարանում հաշվառվել է բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող արցախյան պատերազմում զոհված 3 և հաշմանդամ դարձած 1 զինծառայողի ընտանիք:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառ

2017թ. վկայագրվել է թվով 195 երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը, որոնք ընդգրկվել են մարզի 52 ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում՝ իրենց կարիքներին համապատասխան կրթական ծրագրերում: 2017թ. ընթացքում 20 անչափահասներ դուրս են եկել հաշվառումից, 15 անչափահասների նկատմամբ նշանակվել են հասարակական դաստիարակներ, մանկատուն է տեղավորվել 7 երեխա, ընտանիք է վերադարձել 2 երեխա: Հանրապետության տարածքում բնակվող ՀՀ 16 քաղաքացիներ վերցվել են հաշվառման որպես որդեգրել ցանկացող անձինք և 2 երեխա վերցվել է հաշվառման որպես որդեգրման ենթակա երեխա, 6 ընտանիք որդեգրել են ինենց ընտրած երեխաներին: Խնամատար

ընտանիքում տեղավորված 2 երեխաների ընտանիքների հետ կնքված պայմանագրերը երկարացվել են: Մանկատուն են տեղավորվել թվով 7 երեխա, ընտանիք են վերադարձել թվով 2 երեխա:

Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Հայաստանի չորս մարզերում սննդային աջակցություն» ծրագրի շրջանակներում 2017թ սեպտեմբեր ամսից շուրջ 80 միայնակ, հաշմանդամություն ունեցող կենսաթոշակառուներ, անապահով ընտանիքներ և ծանր սոցիալական կացության մեջ հայտնված քաղաքացիներ օգտվում են տաք սնունդ ծրագրից: <<Դիակոնիա>> ԲՀԿ-ի աջակցությամբ սոցիալապես անապահով ընտանիքների 100 երեխա օգտվել է դպրոցական հագուստ և պարագաներ ծրագրից, 76 երեխա ստացել է տաք հագուստ և 100 ընտանիք ստացել են սննդային փաթեթներ: <<Հովարդ Կարագյոզյան>> ԲՀԿ –ի կողմից սկրինինգ է իրականացվել մարզի 8 դպրոցներում, որին մասնակցել է 924 երեխա: Երեխաները միաժամանակ անցել են ատամնաբուժական և ակնաբուժական սկրինինգ: Սկրինինգի ընդհանուր թիվը կազմել է 1848:

Կրթության բնագավառ

2017թ. մարզում գործել է 123 հանրակրթական ուսումնական հաստատություն: Այդ թվում՝

- մարզպետարանի ենթակայության 114 հանրակրթական դպրոց, որից 91-ը՝ միջնակարգ, 21-ը՝ հիմնական, 2-ը՝ հատուկ /օժանդակ/

ԿԳ նախարարության ենթակայության 7 հանրակրթական ուսումնական հաստատություն.որից 6 ավագ դպրոց, 1 ռազմամարզական վարժարան,

2 ոչ պետական ուսումնական հաստատություններ՝ 1 ոչ պետական միջնակարգ դպրոց /Էօռնեկյանի անվան/, 1 ոչ պետական կրթահամալիր /«Գրիգոր Լուսավորիչ»/:

Ընդհաուր առմամբ՝ քաղաքային 28 և գյուղական՝ 95 դպրոցներ: ԿԳ նախարարության ենթակայության միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ՝ 5 պետական քոլեջ, 1 արհեստագործական ուսումնարան

2017-2018 ուստարում մարզային ենթակայության դպրոցներ են հաճախել ընդհանուր թվով 32199 երեխաներ, այդ թվում՝

- 21 հիմնական դպրոցներում ընդգրկված՝ 422 դասարաններով և 10955 աշակերտներով,
- 91 միջնակարգ դպրոցներում՝ 1177 դասարաններով և 20405/21244 աշակերտներով, հատուկ դպրոցներում 221:

2017թ. առաջին դասարաններ են ընդգրկվել 3622 երեխաներ: Մարզի 47 դպրոցներում ներառական կրթություն է կազմակերպվել 1327 աշակերտների համար, 46 դպրոցներում նախակրթարան են հաճախում 1242 երեխա (ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորմամբ): Մարզում գործում են հատուկ կրթություն իրականացնող 2 դպրոց՝ «Արմավիրի №1 հատուկ (օժանդակ) դպրոց» և «Վաղարշապատի №2 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունները 221 աշակերտներով:

9-րդ դասարանը (հիմնական դպրոցը) ավարտել է 2706 աշակերտ, որից մարզային ենթակայության դպրոցներում՝ 2523-ը:

12-րդ դասարանը՝ 1948 շրջանավարտ, այդ թվում մարզային ենթակայության դպրոցներից՝ 1363: Մարզից միասնական քննություններ է հանձնել 1280 շրջանավարտ, որոնցից հանրապետության տարբեր բուհեր են ընդունվել 1020-ը: 2017թ. բաշխել է 2523 հատ հիմնական ընդհանուր կրթության, որից 80-ը՝ գերազանցության նմուշի, 1352 ընդհանուր միջնակարգ կրթության ատեստատներ: Վերականգնվել են քաղաքացիների կորած և խոտանված դպրոցական ավարտական փաստաթղթերը:

ՀՀ կառավարության 2010թ. հոկտեմբերի 14-ի N1391-Ն որոշման պահանջներին համապատասխան ՀՀ Արմավիրի մարզային ենթակայության 113 հանրակրթական ուսումնական

հաստատություններից վերապատրաստվել են 559 ուսուցիչներ: 62 ուսուցիչներ ստացել են տարակարգ:

Վերահսկվել է դպրոցներում զենքի պահպանման սենյակների կահավորման և ուսումնական զենքով ապահովելու ուղղությամբ աշխատանքների կատարումը, ուսումնական զենքով ապահովված են 97 դպրոցներ, ևս 10 դպրոցներում ընթանում են զենքի սենյակների պատրաստման և վերանորոգման աշխատանքները: Մարզի 25 դպրոցների ռազմագիտության կաբինետների կահավորանքը արդիականացվել է: Ձեռք են բերվել որակյալ ցուցադրական նյութեր:

Մարզի քաղաքային և գյուղական համայնքների նախադպրոցական հաստատությունների թիվը 2017թ. 64-ն է, որոնցում գործել են 181 խմբեր 4965 երեխաներով, որից 5-6 տարեկան երեխաների թիվը՝ 1745: 2017թ. հիմնանորոգման և վերանորոգման աշխատանքներ են ընթանում Նալբանդյանի, Դալարիկի, Բաղրամյանի/Էջմ./, Նորակերտի, Արտիմետի, Շահումյանի և Գեղակերտ համայնքների մանկապարտեզներում: Շարունակվում է համագործակցությունը ՀՀ ԿԳ նախարարության հետ նախակրթարանների ձևավորման և զարգացման ուղղությամբ, մարզի 46 դպրոցներում ստեղծվել են նախակրթարաններ, որտեղ հաճախում է 1242 երեխա: Կազմակերպվել է նախադպրոցական տարիքի երեխաների հաշվառում և նրանց նախադպրոցական հիմնարկներում ընդգրկվածության գնահատում՝ 52%:

ՀՀ կրթության պետական տեսչության կողմից մարզի 48 հանրակրթական ուսումնական հաստատություններում 2017թ. փետրվարի 13-ից մարտի 3-ը իրականացվել են կրթական գործունեության ուսումնասիրություններ: Ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 47 արձանագրություն:

Շարունակվել են «Dasaran.am» կրթական ծրագրի ներդրման և համագործակցության աշխատանքները, «Առողջ դպրոց» ծրագրի շրջանակում կազմակերպվում է այդ դպրոցների տարրական դասարանների աշակերտների սնունդը, «Դպրոցական սնունդ» ծրագրում ընդգրկված են 57դպրոցներ, տարրական դասարանների 6280 աշակերտներով: Այս ուսումնական տարվանից ծրագրում ընդգրկվել են ևս 5 դպրոցներ: Մարզի դպրոցները համագործակցում են տարբեր միջազգային կազմակերպությունների և բազմաթիվ կրթական ծրագրերի հետ, որոնք են Գետաշենի, Մայիսյանի, Սարդարապատի, Աղավնատան միջնակարգ դպրոցները: Շարունակվել է Սարդարապատի միջնակարգ դպրոցի համագործակցությունը Հայաստանում Գերմանիայի դեսպանատան հետ իրականացվող ծրագրերում, այս տարի ևս 1 շրջանավարտ դեսպանատան կրթաթոշակի ծրագրով մեկնել է Գերմանիա՝ սովորելու Գյոթեի անվան համալսարանում:

2016-2017ուսումնական տարվա ընթացքում պետական բյուջեի միջոցներով և այլ ծրագրերով հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվել Թաիրովի, Մուսալեռի, Այգեշատի (Էջմիածնի տարածք) միջնակարգ դպրոցներում, վերանորոգման աշխատանքներ են կատարվել Երասխահունի, Նոր Կեսարիայի, Արազափի, Ծիածանի, Ամբերդի միջնակարգ, Արմավիր քաղաքի N 3 և N 10 հիմնական դպրոցներում:

Լոկալ ջեռուցման համակարգեր են կառուցվել Գրիբոյեդովի և Ջրարբիի միջնակարգ դպրոցներում: Վերանորոգման աշխատանքներ են իրանակացվել Նորակերտ, Շահումյան, Արտիմետ, Նալբանդյանի, Դալարիկի, Բաղրամյանի (Էջմիածնի տարածք) համայնքների մանկապարտեզներում: Ավարտվել է Արշալույսի մանկապարտեզի շինարարությունը:

Նախագծային աշխատանքներ են իրականացվել Վաղարշապատի N 11 հիմնական դպրոցի հիմնանորոգման, Վ Վաղարշապատի N 5, Ծաղկունքի մանկապարտեզների վերանորոգման նպատակով:

Նալբանդյանի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման և կահավորման, նոր մարզադահլիճի կառուցման գործում նշանակալի ներդրում ունեցած կանադահայ բարերարներ Արմեն և Պերճուհի Նալպանտեանների միջոցներով բարեկարգվում է դպրոցի հարակից տարածքը և կառուցվում բացօթյա մարզահրապարակ:

Անհատ բարերարի միջոցներով կառուցվում է Արևադաշտի միջնակարգ դպրոցի շենքը:

Մարզում գործող 122 հանրակրթական դպրոցներից գազով լոկալ ջեռուցում ունեն 103-ը, հեղուկ վառելիքով ջեռուցվում են 13, էլեկտրականությամբ՝ 6 դպրոցներ: Աշխատանքներ են կատարվում համայնքերի գազաֆիկացմանը զուգահեռ լոկալ ջեռուցմամբ ապահովելու նաև մարզի մյուս դպրոցները:

Մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառ

ՀՀ Արմավիրի մարզում առկա է

- 85 մշակույթի տուն,
- Մարզում գործում են 76 գրադարաններ, որոնցից 1-ը ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ, 3-ը քաղաքային, 72-ը՝ գյուղական: Գրադարանային ֆոնդը կազմում է 1163000կտոր գիրք:
- 8 թանգարան,
- ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների Արմավիրի մարզի պետական ցուցակը ներառում է 186 հուշարձան՝ 121 պահպանական միավորով, որոնք տեղաբաշխված են մարզի 58 համայնքներում, և որոնց պահպանության և օգտագործման ուղղությամբ կատարվել են ՀՀ օրենսդրությամբ մարզպետարանին վերապահված լիազորություններն ու գործառույթները,
- 20 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոց,
- 1 արվեստի քոլեջ,
- հունվարի 1-ից չնայած այն հանգամանքին, որ դադարեցվել է ՀՀ մշակույթի նախարարության ծրագրով Արշալույս համայնքում գործող Ռուբեն Նալբանդյան խաչքարերի վարպետաց դպրոցի ֆինանսավորումը, դպրոցը շարունակում է գործել Ռուբեն Նալբանդյանիանձնական միջոցներով:
- Մարզի թվով 16 երաժշտական և արվեստի դպրոցների ազգային, լարային և փողային նվագարանների բաժիններում սովորող 163 աշակերտների ուսման վարձավճարի փոխհատուցման համար նախատեսված գումարը 2017թ. համար կազմել է 43478,0 հազ. դրամ:
- Արմավիրի մարզում մշակութի և սպորտի բագավառներում պետական և մարզային միջոցառումների ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև տարբեր մշակութային, կրթական, մարզական և հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների հետ համագործակցությամբ կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ, փառատոներ, ցուցահանդեսներ, մրցույթներ, մրցաշարեր, առաջնություններ՝ նվիրված պետական, ազգային և այլ տոներին, ազգային ավանդական ծեսերին ու ավանդույթներին, նշանավոր մարդկանց, իրադարձությունների հոբելյաններին ու տարելիցներին, անցկացվել են հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ, ցերեկույթներ, գրքի շնորհանդեսներ, քննարկումներ, կինոդիտումներ, պոեզիայի ժամեր, տիկնիկային ներկայացումներ, տարբեր թեմաների և գիտության տարբեր բնագավառներին նվիրված զրույցներ:

Մարզում բարձր մակարդակով կազմակերպվել և անցկացվել է ՀՀ մշակույթի նախարարության նախաձեռնությամբ «Մշակութային կանգառ» ծրագրի շրջանակներում իրականացված շուրջ 40

թատերական, երաժշտական, պարային խմբերի մասնակցությամբ միջոցառումները և կինոդիտումներ:

Սպորտ: 2017թ. ՀՀ Արմավիրի մարզում նախանշվել են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման, ֆիզկուլտուրային - առողջարարական և մարզական աշխատանքների առաջնահերթություններն ու ուղղությունները, որով Արմավիրի մարզում հիմնական գերակա մարզաձևեր են նախանշվել ծանրամարտը, բռնցքամարտը, ըմբշամարտը, շախմատը, ֆուտբոլը:

Մարզի մարզիկները պարբերաբար մասնակցել են տարբեր մարզաձևերից մեծահասակների, երիտասարդների և պատանիների աշխարհի, Եվրոպայի, միջազգային այլ առաջնություններին մարզում հենակետային համարվող 4 մարզաձևերից՝ ըմբշամարտ, ծանրամարտ, բռնցքամարտ, շախմատ:

- Ապրիլի 2-9-ը Խորվաթիայի Սպլիտ քաղաքում կայացած ծանրամարտի Եվրոպայի մեծահասակների առաջնությունում Սիմոն Մարտիրոսյանը երկամարտում նվաճեց ոսկե մեդալ:
- Հունիս ամսին Ճապոնիայի մայրաքաղաք Տոկիոյում կայացած ծանրամարտի աշխարհի երիատասարդական առաջնությունում նույնպես Սիմոն մարտիրոսյանը երկամարտում դարձավ աշխարհի չեմպիոն:
- Օգոստոսի 19-30-ը Թայվանի մայրաքաղաք Թայբեյում կայացած Ուսանողական համաշխարհային մարզական 29-րդ խաղերի ընթացքում Սիմոն մարտիրոսյանը դարձավ աշխարհի չեմպիոն, իսկ հայթաղցի Անդրանիկ Կարապետյանն արժանացավ արծաթե մեդալի:
- Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով, Հայաստանի Հանրապետության անկախության 26-րդ տարեդարձի կապակցությամբ, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար 2017 թվականի համաշխարհային ուսանողական խաղերի չեմպիոն, ծանրորդ Սիմոն Մարտիրոսյանը պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով:

Մարզի մարզիկներից ըմբշամարտ, բռնցքամարտ, ծանրամարտ մարզաձևերում միջազգային և հանրապետական այլ առաջնություններում տարբեր մրցանակների են արժանացել շուրջ 60-ը, որոնք յուրաքանչյուր տարի համալրում են Հայաստանի տարբեր մարզաձևերի հավաքական թիմերը: Լավագույն արդյունքներ ցույց տված մարզիկները ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից արժանացել են դրամական պարգևների և պատվոգրերի:

Մարզպետի կողմից դրամական աջակցություն է ցուցաբերվել նաև նշված և այլ մարզաձևերի տարբեր առաջնություններին մարզի մարզիկների և թիմերի մասնակցության ապահովմանը:

Նալբանդյան համայնքի միջնակարգ դպրոցի տարածքում կանադահայ բարերարների միջոցներով կառուցվել են մինի ֆուտբոլի, բասկետբոլի խաղադաշտեր, վազքուղի, ցատկափոս:

Վանանդի միջնակարգ դպրոցի մարզահրապարակում տեղադրվել են նոր մարզասարքեր՝ «Հայաստանի մանուկներ» հիմանադրամի և դպրոցի միջոցներով:

«Արթուր Ասատրյան» հիմնադրամի միջոցներով 2017թ. սկսվել է և ընթացքի մեջ է Ծիածանի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի հիմնանորոգման աշխատանքները:

Ամբերդի միջնակարգ դպրոցիի տարածքում սկսվել է կառուցվել վոլեյբոլի և բասկետբոլի խաղադաշտեր, տեղադրվել են մարզասարքեր, ինչպես նաև կատարվել է մարզադահլիճի հարդարման աշխատանքներ՝ դպրոցի միջոցներով:

Streetworkout կազմակերպության և դպրոցի միջոցներով Հացիկի միջնակարգ դպրոցի տարածքում սկսվել է կառուցվել և ընթացքի մեջ է փողոցային մարզումների հրապարակ:

Բարեկարգվել են նաև Արմավիր, Էջմիածին և Մեծամոր քաղաքների բազմաբնակարան շենքերի բակերը՝ տեղադրվել են տաղավարներ, նստարաններ, փոքր ֆուտբոլի, վոլեյբոլի

խաղահրապարակներ, իրականացվել են ասֆալտապատման, լուսավորման աշխատանքներ և ծառատունկ:

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից Էջմիածին քաղաքում իրականացվել է «Վաղարշապատի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» բարեգործական ծրագիրը, ինչպես նաև ընթացքի մեջ է Արմավիր քաղաքի «Հոբելյանական» մարզադաշտի վերակառուցման աշխատանքները:

Ընթացքի մեջ է նաև Էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի կառուցման աշխատանքները:

2017 թվականի ընթացքում ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից անցկացվել են պետական ծրագրերով նախատեսված հետևյալ միջոցառումները՝

- Պետական մարմինների աշխատակիցների միջև հրաձգության հանրապետական մրցույթի անցկացում
- ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի հանրակրթական դպրոցների 1-ինից 3-րդ դասարանների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացում
- ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 4-7-րդ դասարանների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացում
- ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթի անցկացում
- ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում
- ՀՀ Նախագահի մրցանակի համար «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացում
- Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացում
- ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացում
- ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ԼՂՀ հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների սպարտակիադայի անցկացում
- ՀՀ գյուղական մարզական խաղերի անցկացում
- Տարեցների հանրապետական խաղերի անցկացում
- ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական բակ», «Լավագույն մարզական քաղաք», «Լավագույն մարզական գյուղ» հանրապետական ստուգատեսներ
- Դպրոցականների շախմատի հանրապետական օլիմպիադա երեք փուլով,
- ՀՀ դպրոցականների շախմատի պատանիների և աղջիկների առաջնություն:
- <<ՀՀ Ազգային ժողովի գավաթի>> խաղարկություն երեք փուլով,
- Թեթև աթլետիկայի միջազգային ֆեդերացիայի օրացուցային պլանով նախատեսված՝ զոհված և անհայտ կորած ազատամարտիկների հիշատակին նվիրված կրոսավազքի առաջնություն,
- ՀՀ Անկախության 26-րդ տարեդարձին նվիրված՝ դպրոցականների հանրապետական 26-րդ մարզական խաղեր՝ 6 մարզաձևերից,
- Անդրանիկ Մարգարյանին նվիրված ֆուտբոլի հուշամրցաշար:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատանքային ծրագրով նախատեսված և այլ միջոցառումներ,առաջնություններ, մրցաշարեր, այդ թվում՝

- ✓ Ֆուտբոլի Արմավիրի մարզի դպրոցականների առաջնություն,

- ✓ ՀՖՖ-ի կողմից կազմակերպվող՝ Հայաստանի Հանրապետության 2017թ. «ՀՖՖ- Կոկա-Կոլա» գավաթի հանրակրթական դպրոցների մրցաշարի մարզային փուլ
- ✓ Ֆուտբոլի առաջնություն՝ Արմավիրի, Էջմիածնի և Բաղրամյանի տարածքների մանկապատանեկան թիմերի մասնակցությամբ:
- ✓ Ձյուդոյի առաջնություն Արմավիր քաղաքի ըմբշամարտի դպրոցում, որին մասնակցեցին շուրջ 180 մարզիկներ Հայաստանի բոլոր մարզերից:
- ✓ Հրաձգության մրցումներ՝ նվիրված ՀՀ անկախության տոնին:
- ✓ Արմավիրի մարզի շախմատի մեծահասակների առաջնություն,
- ✓ Ազատ ոճի ըմբշամարտի հուշամրցաշար՝ նվիրված Գևորգ Խեչոյանին,
- ✓ Գևորգ Չաուշին նվիրված 2017թ. թեթև աթլետիկայի ավանդական անհատական հանրապետական 28-րդ բաց առաջնություն,
- ✓ Բասկետբոլի և վոլեյբոլի առաջնություններ Արմավիրի և Էջմիածնի դպրոցների թիմերի միջև,
- ✓ Գևորգ Խաչատրյանին նվիրված թեթև աթլետիկայի ավանդական անհատական 17-րդ հուշամրցաշար,
- ✓ ՀՀ Արմավիրի մարզի թեթև աթլետիկայի ֆեդերացիայի գավաթի 2017թ. հանրապետական խաղարկման անհատական ավանդական 21-րդ բաց մրցումներ,
- ✓ Ֆիզկուլտուրայի միասնական օր հանրակրթական դպրոցներում մայիս և հոկտեմբեր ամիսներին՝ աշակերտների և ուսուցիչների մասնակցությամբ,
- ✓ <<Վազորդի օր>> աթլետիկայի անհատական մրցումներ:

Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության բնագավառ

Զարգացման ծրագրեր: Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի նիստի N 29 արձանագրային որոշման N 3 հավելվածով հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը: Մշակվել և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն է ներկայացվել 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանը:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միջոցով ՀՀ կառավարություն է ներկայացվել ՀՀ Արմավիրի մարզի համայնքների հետ համատեղ մշակված, աշխատատեղերի ստեղծմանը միտված 16 ներդրումային ծրագրերի անձնագրեր.

1. ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ համայնքում պտղասառնարանի վերագործարկման ծրագիր
2. ՀՀ Արմավիրի մարզի Հայթաղ համայնքում ելակի ջերմատան հիմնման ներդրումային ծրագիր
3. ՀՀ Արմավիրի մարզի Քարակերտ համայնքում հիմնված այգեգործական տնտեսության զարգացման ծրագիր
4. «Ոսկենի» գինու արտադրության ընդլայնման ծրագիր
5. Ակնաշեն համայնքում գյուղական տուրիզմի զարգացման ծրագիր
6. Այգեշատի պարարտանյութերի արտադրության գործարանի կառուցման ներդրումային ծրագիր
7. Արմավիր քաղաքում խտանյութերի և պահածոների արտադրության համալիր գործարանի հիմնման ծրագիր
8. Արևաշատ համայնքում վարդաբույր խորդենու եթերային յուղի ստացման ներդրումային ծրագիր

9. «Ագրոգեն» ՓԲԸ-ի ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում ձվի արտադրության ներդրումային ծրագիր
10. Զարթոնք համայնքում բարձր տեխնոլոգիաներով ջրամատակարարման փակ համակարգերում ջրային կենդանիների և կից ինովացիոն տեխնոլոգիաներով հագեցած ջերմատներում օրգանիկ գյուղատնտեսական մթերքների աճեցման ներդրումային ծրագիր
11. Ծաղկունք համայնքում թղթե թափոնների վերամշակման արտադրամասի գործարկման ծրագիր
12. Արտաշար համայնքում կաթիլային ոռոգման եղանակով Բոստանային կուլտուրաների մշակության ներդրումային ծրագիր
13. «Ագրո այգի» ՍՊԸ-ի ներկայացրած կաթիլային խողովակների արտադրության գործարանի կառուցման ներդրումային ծրագիր
14. Ապագա համայնքի գյուղ տեխնիկայի սպասարկման կենտրոն հիմելու ներդրումային ծրագիր
15. «Զետոռ» մակնիշի գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգային կարգով ձեռքբերում և տեխնիկայի սպասարկման պարկի հիմնման ներդրումային ծրագիր
16. Արմավիր քաղաքում աղբի վերամշակման գործարանի և ջերմոցային տնտեսության կառուցման ներդրումային ծրագիր:

Առավել իրատեսական և պատրաստի ծրագրերը քննարկվել են ՀՀ վարչապետի մոտ ներդրողների մասնակցությամբ: Արդյունքում լուծումներ են ստացել 5 ծրագրեր, մյուս ծրագրերը ռիսկայնության, ծրագրի արժեքի մեծության, սեփական ֆինանսական միջոցների բացակայության, ինչպես նաև առաջարկվող վարկավորման տոկոսադրույքի պատճառներով չեն իրականացվել:

Չֆինանսավորված ներդրումային ծրագրերը և դրանց ընթացքի մասին տեղեկատվությունը ներկայացվել է Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամ (FREDA)՝ հիմնադրամի աշխատակարգերին համապատասխանության պարագայում ծրագրերի ֆինանսավորման նպատակով: 2017թ. սեպտեմբերի 12-ին մարզպետարանում հրավիրված խորհրդակցությանը Հայաստանում Գյուղական Տարածքների Տնտեսական Զարգացման Հիմնադրամի (ՀԳՏՏԶՀ) տնօրենը ներկայացրել է հիմնադրամի հիմնական առաքելությունը և համագործակցության շրջանակները: Մարզի գործարարների հետ հանդիպմանը ներկայացվել է, որ հիմնադրամի թիրախային խմբում են գտնվում գյուղատնտեսական նշանակության փոքր և միջին ձեռնարկությունները, որոնք ունեն տնտեսական մեծ ներուժ և գործունեություն են ծավալում ձկնաբուծության, սառնարանային տնտեսության, բանջարեղենի և մրգերի պահածոյացման, ջերմոցային տնտեսության, գինու արտադրության, կաթի վերամշակման, թռչնաբուծության և այլ ենթաոլորտներում:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության հետ քննարկվել է Փարաքար համայնքի դպրոցի վթարային շենքը արտադրություն հիմնելու նպատակներով օգտագործելու համար համայնքապետարանի հաշվեկշռին հանձնելու հնարավորության հարցը: Փարաքար համայնքի դպրոցների միավորման գործընթացն ավարտվել է: Ազատված դպրոցի շենքը համայնքի կողմից արտադրական նպատակներով օգտագործելու համար կազմված ծրագիրը ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության և ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության կողմից հետ է վերադարձվել համայնքին՝ ծրագրի լրացուցիչ հիմնավորում և լրամշակված տարբերակը ներկայացնելու պահանջով:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել ՀՀ մարզի Եղեգնուտ համայնքում բամբակամշակման, սերմի վերամշակման և սերմից ձեթի վերամշակման արտադրամասերի, բամբակամանվածքային ֆաբրիկայի, քարից թղթի ստացման արտադրամասի և անասնապահական ֆերմայի հիմնում ծրագիրը /իրականացնող՝ «Բամբակ տեքստիլ գրուպ»

ՍՊԸ/՝ Եղեգնուտ համայնքի սեփականություն հանդիսացող 10.5 հա հողամասը նվիրաբերության պայմանագրով անհատույց սեփականության իրավունքով վերոգրյալ ընկերությանը տրամադրելու նպատակով՝ ՀՀ կառավարության համաձայնեցմանը ներկայացնելու համար: Ծրագիրը գտնվում է քննարկման փուլում /ծրագրի նախանական արժեքը՝ 2.7 մլրդ դրամ/:

Մարզի 5000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքներներում տնտեսական զարգացման հարցերով պատասխանատուների հավաքագրման և ընտրության փուլը ավարտվել է:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը նախաձեռնել է համայնքի տնտեսական զարգացման հարցերով զբաղվող անձանց պարբերաբար վերապտրաստման գործընթաց՝ համայնքի սոցիալ- տնտեսական զարգացման ծրագրերի կազմման, ձեռներեցության և գյուղատնտեսության աջակցության մեթոդների և գործիքակազմի գծով: ԵՄ կողմից ֆինանսավորվող «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» ծրագրի շրջանակներում ներկայացված նախաձեռնությանը անդամագրվելու և ԵՄ կողմից հայտարարված դրամաշնորհին մասնակցելու նպատակով, առաջարկվել է համայնքների ղեկավարներին՝ ծրագրի քարտուղարություն ներկայացնել համապատասխան հայտեր ծրագրին անդամակցելու համար: «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» ծրագրին անդամակցության հայտ են ներկայացրել մարզի Արմավիր քաղաքային և Փարաքար, Ջրարբի, Մայիսյան, Շենիկ, Երվանդաշատ, Հացիկ, Արգավանդ գյուղական համայնքները: 2017թվականի դեկտեմբերի 19-21-ը միջազգային փորձագետի կողմից անգլերեն լեզվով՝ հայերեն թարգմանությամբ կազմակերպվել է հատուկ դասընթաց ՀՀ մարզպետարանների համապատասխան աշխատակիցների համար, որոնք տեղական տնտեսական զարգացման գաղափարախոսությունը կտարածեն մարզում և կօժանդակեն անդամագրված համայնքների տնտեսական զարգացման պատասխանատուներին տեղական տնտեսական զարգացման պլանների կազմման գործում:

Զբոսաշրջություն: Մարզը զբոսաշրջության առումով այնքան էլ բացահայտված չէ, սակայն մարզի համար յուրօրինակ զբոսաշրջային վայրեր կարող են հանդիսանալ Բագարանը, Երվանդաշատը, Շուշանիկ եկեղեցին, Երվանդ արքայի որսորդական ամրոցը, հնագիտական գտածոները, Նոր Արմավիրում գտնվող Արգիշտիխինիլի հնավայրը, մարզը ունի էկոտուրիզմի զարգցման համար մեծ պոտենցյալ: ՀՀ Արմավիրի մարզում կան բոլոր հնարավորությունները հոգևոր-մշակութային, էթնիկ, գյուղական, ագրո և էկո տուրիզմի զարգացման համար՝ զբոսաշրջությունը դարձնելով մարզի տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժերից մեկը: ՀՀ Արմավիրի մարզում արդեն իսկ կան առանձին կազմակերպություններ, որոնք զբաղվում են հոգևոր-մշակութային և էթնիկ տուրիզմով և որոնց հաջողված փորձի տարածումը մարզի այլ համայնքներում կարող է նպաստել մարզում զբոսաշրջության ոլորտի զարգացմանը:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտե է ներկայացվել ամփոփ տեղեկատվություն մարզում գործող հյուրանոցային տնտեսության օբյեկտների, ինչպես նաև 2017թ. ընթացքում Արմավիրի մարզ կատարված զբոսաշրջային այցելությունների վերաբերյալ: 2017 թվականի ընթացքում ՀՀ Արմավիրի մարզ են այցելել շուրջ 116870 ներքին և ներգնա զբոսաշրջիկներ:

2017թ. ՀՀ Արմավիրի մարզպետարանը նախաձեռնել է իրականացնել մարզի զբոսաշրջային գրավչությունների գույքագրում, որի նպատակն է վեր հանել մարզի յուրաքանչյուր համայնքի զբոսաշրջային ներուժը, դիտարկելով յուրաքանչյուր հնարավորություն, որը համայնքը կդարձնի գրավիչ զբոսաշրջության այս կամ այն ուղղության զարգացման տեսանկյունից: Արդյունքում, կվերանայվի մարզի զբոսաշրջային քարտեզը, կմշակվեն երթուղիներ, համապատասխան տեսանյութ, իսկ հետաքրքիր գաղափարները մարզպետարանի մեթոդական աջակցությամբ

կդառնան ներդրումային ծրագրեր: Այս ուղղությամբ առաջարկվել է համայնքների ղեկավարներին լրացնել հապատասխան հարցաթերթը և արդյունքում համայնքներից հավաքագրվել է զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվական բազա, որում տեղ են գտել նաև համայնքներում ապրող այն ընտանիքները, որոնք պատրաստ են հյուրընկալության:

2017թ. մայիս ամսին Մեծամորի քաղաքապետարանի հյուրանոցի վերագործարկման հայտ-առաջարկը ներկայացվել է Արևելյան գործընկերության «Քաղաքապետերը տնտեսական աճի համար» նախաձեռնությանը:

Մարզպետարանը պատրաստակամություն է հայտնել համագործակցելու «Որդեգրիր մեկ գյուղ» նախագծի հետ, որը մարզի համայնքների գրավչությունները սփյուռքահայության շրջանում և արտերկրում գովազդելու նախաձեռնությամբ է հանդես եկել:

Կազմվել և քննարկման փուլում է ՀՀ Արմավիրի մարզի զբոսաշրջային կենտրոնի հիմնման ծրագիրը, որը մարզում կիրականացնի տուրիստական երթուղիներ և մարզ այցելող զբոսաշրջիկների համար կարող է բացահայտել Արմավիրը:

Արտաքին կապեր

2017 թվականին Արմավիրի մարզը շարունակել է համագործակցությունը նախկինում հաստատված կապերով՝ Արմավիրի մարզի տնտեսության զարգացմանը նպաստող ներդրումային հնարավորությունների բացահայտման, մարզում հնարավոր ներդրողների ներգրավման և մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով:
ՀՀ Արմավիրի մարզպետարանի և ՌԴ Վոլոգդայի մարզի կառավարության միջև 2016 թվականի ապրիլի 7-ին ստորագրված առևտրատնտեսական, գիտատեխնիկական և հումանիտար համագործակցության մասին համաձայնագրի շրջանակներում 2017 թվականի դեկտեմբերի 16-ին մարզ է այցելել Օլեգ Կուվշիննիկովի գլխավորած պատվիրակությանը: Երկկողմ փոխգործակցությունն ընդլայնելու և այն զարգացման նոր հարթության վրա դնելու նպատակով մարզպետի և նահանգապետի կողմից հաստատվել է Արմավիրի մարզի և Վոլոգդայի կառավարության 2018-2020թվականների համագործակցության ծրագիրը, որն ուղղված է կրթամշակութային, առևտրատնտեսական, գիտատեխնիկական կապերի զարգացմանը: Մարզպետարանում կազմակերպված համտեսի և տեսականու ցուցադրության ընթացքում Վոլոգդայի պատվիրակությունը ծանոթացել է մարզի արտադրական ձեռնարկությունների կողմից ներկայացված տեսականուն և դրանց որակական հատկանիշներին: Պատվիրակության ընդունելությունն Արմավիրի մարզպետարանում ամփոփվել է խորհրդակցությամբ, որի ընթացքում ներկայացվել են նաև Վոլոգդայի մարզի առևտրատնտեսական ներուժը, ինչպես նաև առանձին ընկերությունների արտադրական հնարավորությունները: Դեկտեմբերի 16-ին պատվիրակությունը Վելիկի Ուստյուգ քաղաքից ժամանած Ձմեռ պապի հետ միասին այցելել է մարզի Մրգաշատ և Բաղրամյան համայնքներ մասնակցելու Ամանորի նախաշեմին տոնական եղևնիների լույսերի վառման միջոցառմանը: Դեկտեմբերի 18-ին ՀՀ Արմավիրի մարզպետի ուղեկցությամբ պատվիրակությունը այցելել է Ծիծեռնակաբերդի Հայոց ցեղասպանության հուշահամալիր: Հանրապետության Նախագահն ընդունել է Ռուսաստանի Դաշնության Վոլոգդայի նահանգապետին և կարևորել է հայ-ռուսական միջպետական հարաբերությունների կարևոր բաղադրիչներից համարվող ապակենտրոնացված փոխգործակցությունը Հայաստանի մարզերի և Ռուսաստանի նահանգների միջև: Նահանգապետը ներկայացրել է իր հայաստանյան այցի հագեցած ծրագիրը, որի շրջանակներում համագործակցության նոր փաստաթղթեր են ստորագրվել, համատեղ նոր նախաձեռնությունների վերաբերյալ պայմանավորվածություններ ձեռքբերվել:

2017թվականի նոյեմբերի 17-19-ը ՌԴ Տվեր քաղաքի հայկական ազգային-մշակութային «ԱՐԱՐԱՏ» կենտրոնի նախագահի հրավերով ՀՀ Արմավիրի մարզպետը նոյեմբերի այցելել է ՌԴ Տվեր քաղաք, մասնակցել մշակույթի օրերի շրջանակում նախատեսված միջոցառումներին և հանդիպել տեղի մեծաթիվ արմավիրցիների հետ:

ՀՀ Արմավիրի մարզի և ՌԴ Յարոսլավլի մարզի միջև համագործակցության շրջանակում. 04.09.2017թ Յարոսլավի մարզի հայ համայնքի հրավերով մարզպետի գլխավորած աշխատանքային խումբը գտնվել է Յարոսլավլում, մասնակցություն ունեցել հայ համայնքի կողմից կազմակերպված մշակութային միջոցառմանը, ապա հանդիպել նահանգային իշխանությունների հետ:

2017թ. մարտի 29-ին ՀՀ Արմավիրի մարզպետի և Հայաստանում ՉՀ դեսպանի միջև կնքվել է պայմանագիր՝ ՀՀ Արմավիրի մարզի դպրոցներում «Կանաչ Հայաստան՝ աղբահանության միջոցով» աղբի հավաքման և տեսակավորման վերաբերյալ ուսուցողական ծրագրի իրականացման նպատակով: Ծրագիրը իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարության գործուն աջակցությամբ: 2017թվականի դեկտեմբերի 6-ին ամփոփվել է «Կանաչ Հայաստան՝ աղբահանության միջոցով» ուսուցողական ծրագրի արդյունքները, որին ներկա էին մարզպետը, Հայաստանում ՉՀ դեսպանը, մարզպետարանի և դեսպանատան պատասխանատու պաշտոնյաներ, ծրագրի արդյունքում հաղթող ճանաչված դպրոցների տնօրեններ, ուսուցիչներ և աշակերտներ: «Մաքուր Արմավիրը սկսվում է քո տնից» մարզային մրցութային ծրագիրը հաջողությամբ ընթացել է բոլոր դպրոցներում: Մրցույթի շրջանակներում, ինչպես նաև համապետական և մարզային շաբաթօրյակների ընթացքում աշակերտները հավաքել, տեսակավորել են վերամշակման ենթակա աղբը, թափոններից պատրաստել հետաքրքիր և կենցաղում կիրառելի բազմաթիվ իրեր, առարկաներ: Արդյունքում հաղթող են ճանաչվել և մրցանակային 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերն են զբաղեցրել Նորավանի, Հովտամեջի և Վաղարշապատի թիվ 2 հատուկ դպրոցները՝ պարգևատրվել են պատվոգրերով և համակարգչային տեխնիկայով:

25.08.2017թ ՀՀ Արմավիրի մարզպետն ընդունել է Չեխիայի Հանրապետության Պրահայի հնագիտության ինստիտուտը (ՉՀՊՀԻ) և «G IMPULS PRAHA» կազմակերպությունը ներկայացնող հնագետների խմբին, որը գլխավորել է ազգությամբ չեխ, բնական գիտությունների դոկտոր Յան Ֆրոլիկը: Արմավիրի մարզում հնագիտական ուսումնասիրություններն իրականացվում են 2016 թվականից: Հանդիպմանը ՉՀՊՀԻ-ն ներկայացնող բնական գիտությունների դոկտոր Յարոսլավ Բարտան ներկայացրել է «Արմավիրի մարզի գեոֆիզիկական չափումների ծրագիր» կոչվող նախագիծը, որի շրջանակներում Չեխական զարգացման կազմակերպության ֆինանսավորմամբ «G IMPULS PRAHA» կազմակերպությունը ՉՀՊՀԻ-ի հետ համագործակցությամբ համապատասխան աշխատանքներ է իրականացրել Վաղարշապատի տարածաշրջանի Այգեշատ համայնքի հնավայրում: Հնագետների խումբը ղեկավարող Յան Ֆրոլիկը ներկայացրել է Ք.ա. 6-րդ հազարամյակից մինչև 1-ին հազարամյակը թվագրվող մարզի Արգիշտիխինիլի, Աղավնատուն, Լեռնամերձ, Ծաղկալանջ հնավայրերում իրականացված հնագիտական հետազոտությունների վրա, որոնց արդյունքում պարզվել են վերը նշված հնավայրերում առկա հուշարձանների տարածման սահմանները, շերտերի հզորությունը, հողաշերտերի տակ ծածկված շինությունները:

30.06-02.07.2017թ ՀՀ Արմավիրի մարզպետի գլխավորած պատվիրակությունը 2017թվականի հունիսի 30-ից հուլիսի 2-ը եղել է Ռումինիայի Հանրապետության Կլուժ նահանգում: Այցի շրջանակում կողմերի միջև ստորագրվել է համագործակցության պայմանագիր, որը նախատեսում է փոխադարձ շահավետ համագործակցություն ծավալել մշակույթի, տնտեսության, կրթության, սոցիալական, սպորտի և տուրիզմի ոլորտներում, ինչպես նաև համագործակցության ձևեր գտնել երկու տարածքային միավորների հանրային հաստատությունների, ոչ կառավարական կազմակերպությունների ու ձեռնարկատիրական միությունների միջև: Արմավիրի մարզի և Կլուժ

նահանգի միջև համագործակցություն հաստատելու առաջին քայլերն արվել են 2016թ. Ռումինիայում Հայաստանի դեսպանության և այդ ժամանակ Կլուժի նահանգային խորհրդի նախագահ, այժմ փոխնահանգապետ Իշտվան Վակարի համատեղ ջանքերով:

Շարունակվել է ՀՀ Արմավիրի մարզի և Սլովակիայի Հանրապետության Տռնավայի նահանգի միջև համագործակցությունը:

ՀՀ Արմավիրի մարզի և Իտալիայի Հանրապետության Վենետո նահանգի միջև համագործակցության շրջանակներում 2017 թվականի ընթացքում սահմանված կարգով իրականացվել է նամակագրություն: 2018 թվականի փետրվար ամսվա ընթացքում նախստեսվում է Արմավիրի մարզպետի գլխավորած պատվիրակության այցը Վենետոյի նահանգ՝ համաձայնագրի ստորագրման և իրականացվելիք հետագա քայլերի քննարկման նպատակով:

Տեղեկատվության բնագավառ

2017թ. ընթացքում մարզպետարանի պաշտոնական կայքում հրապարակվել է 110 մամլո հաղորդագրություն, 35 քաղաքացիական և համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթների և այլ բնույթի հայտարարություններ և դրանց արդյունքների վերաբերյալ տվյալներ, տարբեր ոլորտներ ներկայացնող 137 տեղեկանք, կազմակերպվել և իրականացվել է ավելի քան 50 հարցազրույց:

Ապահովվել է մարզպետի կողմից ընդունված իրավական ակտերի հրապարակումը: 2017 թ. ՀՀ Արմավիրի մարզպետարանի պաշտոնական կայքում հրապարակվել է ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից ընդունված 466 որոշում և արձակված 114 կարգադրություն:

Մարզում լրատվական գործունեություն իրականացնող 3 հեռուստաընկերությունների՝ <<ԱԼՏ>>, <<Լույս>>, <<Նոյ Հայաստան>>, <<Հայրենականչ>> թերթի, իսկ հանրապետական ԶԼՄ-ներից՝ <<Հանրային հեռուստաընկերություն>> և <<Արմենիա>> հեռուստաընկերությունների, <<Հանրային ռադիոյի>> մարզային մշտական թղթակիցների և լրատվական այլ գործակալությունների, այդ թվում՝ բաժնի կողմից մշտական մոնիտորինգ իրականցվող էլեկտրոնային լրատվական կայքերի (armenpress.am, armtimes.com, armlur.am, panorama.am, 168.am, hayeli.am, hetq.am, hraparak.am, henaran.am lragir.am, lurer.com, nwes.am, operativ.am, erkir.am, chi.am, mamul.am, 1in.am, tert.am, slaq.am) կողմից ՀՀ Արմավիրի մարզպետի և մարզպետրանի աշխատակազմի գործունեությանը վերաբերող լուսաբանումների թիվը գերազանցել է 300-ը:

2017թ. ՀՀ Արմավիրի մարզպետարանը հանդես է եկել 3 պարզաբանմամբ, պատասխանել է 23 գարավոր հարցման: ՀՀ Արմավիր մարզպետարանի կայքում հրապարակվել է մարզի 97 համայքի ավագանու 786, իսկ համայնքի ղեկավարի՝ 397 որոշում, համայնքային բյուջետային եկամուտների ամսական և ծախսերի եռամսյակային տվյալներն ու դրանցում արձանագրված խախտումների վերացմանը վերաբերող ընհանուր թվով 122 փաստաթուղթ:

Աջակցություն է ցուցաբերվել Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի/ՀԿՏՀ/ շահագործման և "Mulberry" էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջև փոխգործակցության ապահովման, ինչպես նաև համայնքապետարանում պաշտոնական կայքերի ներդրման և վարման աշխատանքներին: